



# Հակոբ Պարոնյան

## Ազգային շոշեր

### ԱՆՏՈՆ ՀԱՍՈՒՆԵԱՆ

1810 թուականին ծնաւ Անտոն Հասունեան, կաթողիկոս հռովմէական այն հայերուն, որոնք նախապատիւ կը սեպեն իրենց ազգային իրաւունքներն ս. պապին հողաթափներուն մէջ տեսնել, քան թէ իրենց ձեռներուն մէջ: Իւր ծննդեան գիշերն ամէն մարդ սկսաւ իրարու հարցնել, թէ ինչո՞ւ գիտաւոր աստղ չերեւցաւ, վասն զի նախնիք գիտաւորներն չարագուշակ նշան համարելով՝ կը հաւատային, թէ նախ գիտաւորը կու գայ եւ ապա փորձանքը: Նոյն գիշեր շատերը մէյմէկ դիտակ առած՝ երկնի երեսը կը դիտէին, տեսնելու համար գիտաւորն, որ անպատճառ երեւցած ըլլալու է, բայց մեզի անտեսանելի է, կ'ըսէին: Իրաւունք ունէին: Գիտաւորն որոշած էր Հասունեանէ երկու ամիս առաջ գալ. բայց Հասունեան, որ միշտ գաղտնի գործել կը սիրէ, գիտաւորին դիտաւորութիւնն իմանալով՝ պոչէն բռնած էր եւ թող չէր տար, որ երթար: Սարսափելի կրիւ մը ծագած էր արդէն այս երկուքին մէջտեղը. թէպէտ եւ գիտաւորն վերջապէս յաջողած էր իր թշնամոյն ձեռքէն պրծիլ եւ երկնի երեսն երեւիլ, սակայն պոչը Հասունեանի ձեռքը մնացած էր: Այս էր պատճառ, որ մինչեւ մօտ ատեններս հայերու ռամիկ մասը պոչը կտրած կը կոչէր հռովմէական հայերը: Գիտաւորն, որ իւր հակառակորդին չափ հաստատամիտ էր, ետ դառնալով ուրիշ պոչ մը գտած էր եւ տարի մը ետքը, 1811 օգոստոս 11-ին երեւցած էր ասելի մեծ պոչով մը. սակայն խեղճը չէր կրնար հասկցունել, թէ այս անգամ փորձանքն իրմէ առաջ եկած էր: Եթէ գիտաւորն իւր երեւմամբն Հասունեանի փորձանք ըլլալն կ'ուզէր յայտնել աշխարհի, անշուշտ իւր պոչին մեծութեամբն ալ անոր մեծ փորձանք ըլլալն կը փափաքէր ծանուցանել: Այս

համառօտ, բայց կարեւոր տեղեկութիւնը տալէն ետքը պէտք է, անհրաժեշտ պէտք է հոս յիշել, զոնէ Հասունեանն ազգատեաց շկոչելու համար, երբ իւր կենսագրութիւնը կը կարդանք, որ այս կրօնաւորն գաւակ է Եաղուպ Իպն Իւսեֆ Հաստ անուն բերիացի ասորիի մը եւ ոչ թէ հայու գաւակ, ինչպէս կ'աւանդեն անհաւատարիմ պատմագիրներէն ոմանք: Իւր գործերն բաւական են ապացուցանել, թէ հայու գաւակ չէ. եթէ ըլլար՝ անկարելի էր, որ իր ազգն սպաննելու աշխատէր, քանի որ ազգն սպաննողներու համար պատիժ մը սահմանուած չէ: Երբ հարցուցաւ Սողոմի, թէ ինչո՞ւ օրէնք մը չդրաւ հայրասպաններու համար, չէի կարծեր, որ, պատասխանեց Աթենքի օրէնսդիրն, պիտի գտնուին մարդեր, որ համարձակին իրենց հայրն կամ մայրն սպաննելու:

Կը պատմեն թէ ծննդենէն տասն օր ետքը եկեղեցի տարուցաւ կնքուելու համար: Մկրտութեան ժամանակ իմացուց կերպով մը, որ երկար արարողութիւններէ շատ չախորժիր, այնչափ շատ լացաւ, որ մկրտող քահանան ստիպուցաւ սղագրել... արարողութիւնը: Փառասէր ըլլալն ալ հաստատեց նոյն օրն. երբ կնքահայրն քահանային պատասխանելով կ'ըսէր, թէ երախան հաւատք, յոյս եւ սէր կը խնդրէ, մէկէն ի մէկ կնքահօրը գիրկէն նետուելով՝ երախան կաթողիկոսութիւն կը խնդրէ, պոռաց: Կնքահայրն իւր սանին սիրտը շկոտրելու համար՝ սէրը վերցուց եւ տեղը կաթողիկոսութիւն դնելով՝ կրկնեց. երախան հաւատք, յոյս եւ կաթողիկոսութիւն կը խնդրէ: Պատրիարքութիւն ալ կը խնդրեն, կրկնեց տղան. կնքահայրն, որ վարժուած էր գաւակին տալ ինչ որ ուզէր, չհամարձակեցաւ սանին խնդիրքը մերժել. ուստի հաւատք բառին տեղ պատրիարքութիւն դնելով ըսաւ՝ երախան պատրիարքութիւն, յոյս եւ կաթողիկոսութիւն կը խնդրէ:

Հապա՛ հաւա՞տքը:

Հիմակուհիմա թող մնայ այն, պատասխանեց երախան:

Այս պատմութիւնն ըստ մեզ, առասպել մ'է. բայց որովհետեւ առասպելներն շատ անգամ ճշմարտութեան այլաբանութիւններն են, կրնանք այս առասպելէն ալ այս ճշմարտութիւնը քաղել, որ Հասունեան իւր ամէն ուզածը ձեռք բերելու կարողացած է, նոյնիսկ իւր ծննդեան օրերուն մէջ:

Մինչև տասնըփինգ տարեկան Կ. Պոլսոյ վարժարաններուն մէջ դաստիարակութիւն առնելէ ետքը, 1825-ին քոլեճցի քահանաներու ձեռամբ դրկուեցաւ Հռովմ, Բրոքականդայի դպրոցը, քահանայ ըլլալու համար: Նախ յիշեալ դպրոցին մեծատրներէն մերժուեցաւ, բայց յետոյ Տուրսունեան Շ. Բարսեղ եւ Յովնանեան Շ. Կարապետ վարդապետներուն ջանքովն եւ աղաչանքովն ընդունուեցաւ հոն, ուր քանի մը տարի կարդալէն ետքը քահանայ ձեռնադրուեցաւ: Այս կէտին մէջ Հասունեան անմեղ է եւ մեծ անիրաւութիւն է Տուրսունեանի եւ Հովնանեանի յանցանքն անոր վրայ բեռնաւորելը:

1833-ին Պոլիս դարձաւ եւ բնակեցաւ Ղալաթիա, Յիսուս Փրկիչ մայր եկեղեցոյն վանատան մէջ: Այս թուականին եկեղեցականներէն ոմանք իրենց նախագահին դէմ լարուած ըլլալու համար, ամէն օր նորանոր խնդիրներ կը յարուցանէին, օրինակի համար, եթէ նախագահն պատուէր տար, որ պատարագին մէջը խաչակնքեն՝ ասոնք փողոցը կ'ելնէին եւ հոն կը խաչակնքէին: Յիշեալ եկեղեցականներն յաջողեցան իրենց մէջ առնել նաեւ Հասունեանն, որ վանքէն նոր ելած՝ մաքուր աղանի մը ըլլալով՝ խաբուեցաւ անոնցմէ եւ խեղճը միամտութեամբ աթոռակալ անուանուեցաւ քանի մը տարիէն:

1838-ին երբ Գաղատիոյ հռովմէական հայերը կը կեղերուէին քանի մը քահանաներէ, որոնք Հասունեան կուսակցութիւնն թեւ եւ թիկունք առած կը գործէին, ինչ որ կ'ուզէին, նախագահ Մարուշ գերապայծառն քննիչ մը դրկել կ'որոշէ հոն՝ ժողովուրդը հանդարտեցնելու համար: Հասունեան յօժարակամ ստանձնեց այս պաշտօնը, գնաց եւ ետ դարձաւ երեք օրուան մէջ ժողովրդեան յուզումն... սաստկացնելէն ետքը:

Իւր անունը անմահացնելու համար կը փափաքէր հռովմէական հայերուն բարութիւն ընել, այնպէս վարուելով անոնց հետ, ինչպէս կը վարուի կօշկակար մը իր աշակերտին հետ: Ժողով կը կազմէր Պելկրատի անտառներուն մէջ, ուր թէպէտեւ կ'երթար օդ փոխելու, բայց նախագահը փոխելու համար աշխատելէ ետ չէր մնար: Անտառային ժողովի մէջ որոշուեցաւ օր մը եւ գրուեցաւ Բրոքականտային թէ Մարուշ նախագահը ծեր էր, տկար էր, անդամալոյծ էր, անկար էր, եւ վերջապէս էր ինչ որ կ'ուզէր Հասունեան ընել գայն, եւ թէ՛ օգնիչ եպիսկոպոսի մը կարօտ էր: Արդարեւ նախագահը ծեր էր, բայց քանի որ իր

պաշտօնը վալս պարել չէր՝ իր ծերութենէն վնաս մը չէր գար ազգային իրաւունքներուն: Բրոքսկանտան հաւատք ընծայեց իրեն դրկուած գրութեան եւ Հոովմ կանչեց Հասունեանը, որ 1842-ին հասաւ հոն առանց այս ուղեւորութիւնն ազգին հաղորդելու եւ անոր հաւանութիւնն առնելու եւ օգնիչ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ:

1842 սեպտեմբեր 21-ին Պոլիս դարձաւ: Հեղեղի պէս արցունք կը վազէր իր աչերէն, երբ կը տեսնէր, որ կը շատնային Պատրիարքին վրայ գանգատներն, որոնք իր գործարանէն կ'ելնէին, սիրտը պատառ-պատառ կ'ըլլար՝ երբ կը դիտէր, որ աղէկ չէին երթար ազգին գործերը, գորս ինքը կը խառնէր. կու լար, կ'ողբար եւ կը հատաչէր, որ պատրիարքական իշխանութիւնը ձեռք անցունէ եւ ժողովրդեան վերքերը դարմանէ: Իւր ողբերը մինչեւ Արամազդայ քիթը բարձրացան, փոնգտաց աստուածներու հայրը. պատրիարքն իր աթոռէն վար գլորեցաւ: Հասունեան բարձրացաւ պատրիարքական աթոռին վրայ. հով, անձրեւ, կարկուտ, փոթորիկ անմիջապէս հասան, շատ մը տուներու ապակիներն փշրուեցան. մեծ ծառեր արմատախիլ եղան. քանի մը տուներ կործանեցան:

1845-ին պատրիարքական աթոռին վրայ ելնելէն ետքը, ուզեց, ազգին լաւ ծառայելու համար, նախագահական իշխանութիւնն ալ իր վրայ առնել: Ուստի սկսաւ նախագահին դէմ գանգատներ բազմապատկել եւ ըսել. նախագահը ցնդած է, անկարող է իշխանութիւնը գործածել: Գեր. Մարուշն օղափոխութեան համար Պիլեգիկճի Պօղոս աղային տունը կը գտնուի օր մը: Հասունեան իմանալուն պէս ժողվեց իր մարդերը, յիշեալ տունը գնաց եւ նախագահը պաշարել տալով՝ ըսաւ իրեն.

Դուն ծեր ես, ցնդած ես, անկար ես, ուստի քեզի յանձնուած հոգիներու փրկութեանը համար, եկեղեցիին շինութեանը համար, պայծառութեանը համար, անպատճառ հիմա նախագահութենէդ հրաժարելու ես:

Ահա առաջարկութեան ձեւ մը, որուն մէջէն, եթէ նախագահութիւն բառին տեղ քսակ բառը դնենք, ճիշտ այն ձեւը կ'ունենայ, որով առաջարկութիւն կ'ընեն մեզ քանի մը զինուած մարդեր, երբ լեռներու մէջ հանդիպին մեզի: Ծերունին այս առաջարկութեան վրայ անբարբառ անոնց երեսը նայեցաւ եւ երբ դուրս ելաւ՝ նաւակ մը մտաւ, նաւակին մէջ կաթուած իջաւ եւ քանի մը օրէն վախճանեցաւ...

ի փրկութիւն հոգոյ, ի շինութիւն եւ ի պայծառութիւն եկեղեցոյ Տեառն մերոյ  
Հասունեանի: Յուդարկատրութեան հանդէսին օրը, երբ Հասունեան սուրբ  
պատարագ կը մատուցանէր եւ ահա սարկաւագներն խորանի վրայ Հասունեանը  
նախագահ կ'ընտրեն եւ կը հռչակեն երգելով եւս առաւել գարհիպիսկոպոսն մեր  
գտէր Անտոն նախագահ եւ այլն: Եւ որովհետեւ Բ. Դոնէն հրամանագիր  
ըրկուած չէր սարկաւագներուն յայտարարող, թէ նախագահ ընտրելու իրաւունքն  
սարկաւագներու տրուած է՝ եկեղեցական եւ աշխարհական կը յուզուին  
եկեղեցիին մէջ այս նոր ընտրութեան վրայ եւ 1848 օգոստոս 6-ին Յիսուս Փրկիչ  
մայր եկեղեցոյ մէջ ընդհանուր ժողով կը գումարուի: Կը հարցուի ժողովոյ մէջ  
գեր. Հասունեանին, թէ որո՞ւն ընտրութեամբն նախագահ եղած է, Հասունեան  
ձեռները շփելով կը հրամայէ երկիւղածութեամբ, որ Հռովմէն իրեն տրուած  
կոնդակը կարդացուի: Կոնդակը կը կարդացուի լատիներէն լեզուով.  
Ժողովականներն իրարու երես կը նային:

Մենք լատիներէն չենք հասկնար, գերապայծառ, կ'ըսեն ժողովականք:

Վնաս չունի, կը պատասխանէ Հասունեան, թող կարդացուի:

Բան մ'ալ չենք հասկնար:

Աւելի աղէկ... արդէն մարդս ամէն կարդացածը կամ լսածը հասկնալու  
պարտաւոր չէ:

Կոնդակին լատիներէն ընթերցումը կը վերջանայ եւ տաճկերէնը կը սկսի, վասն  
զի այն թուականին հայերէն լեզու չկար: Կոնդակին իմաստն էր հետեւեալը.

«Հասունեա՛ն, երբ որ Կ. Պոլսոյ նախագահը վախճանի՝ այն ատեն դուն  
Անարգաբայ թենը թողլով Կ. Պոլսոյ նախագահութիւնը ձեռք առ... եթէ այդ  
իշխանութեանդ դէմ դնելու ըլլան՝ զօրութիւնդ ցցուր անոնց. եթէ չկարենաս  
գսպել՝ մեզի իմաց տուր, որ պէտք եղածը տնօրինենք եւ անոնց գլուխը  
ջախջախենք...»:

Տխրութիւնը եւ լուսութիւնը կը թագաւորեն ժողովոյ մէջ. բայց ի՛նչ օգուտ, արտաքին  
գործերու պաշտօնեան միշտ Հասունեան է: Հասունեան, ինչպէս յայտնի է,

գովելի համբերութեամբ վարուած է այս պարագային մէջ. վասն զի կարող էր դանակով զարնել սպաննել Մարուշը, քանի որ կոնդակին մէջ գրուած էր, թէ անոր մեռնելէն վերջը ինք նախագահ պիտի ըլլար: Ժողովականները տեսնելով, որ իրենց ազգային իրաւունքներն բռնաբարուած են այս կոնդակով՝ զոր Հասունեան ձեռք անցուցած էր Հռովմէն օգնիչ-եպիսկոպոս ձեռնադրուած Ժամանակ եւ զոր գաղտնի պահած էր՝ կը գայրանան: Յակոբ չելեպին կը հարցունէ գեր. Հասունեանին.

Տէր, ազգին իրաւունքներն բռնաբարուած են այս կոնդակով:

Ինձի ալ այնպէս կը թուի, կը պատասխանէ Հասունեան ցաւակցութիւն յայտնելով:

Կ'ընդունի՞ք, որ Հռովմ մեր ազգային իրաւունքները յափշտակէ:

Քաւ լիցի... կը պատասխանէ, համրիչը հանելով ծոցէն:

Երկու թուղթ գրենք, մէկը ս. պապին, միւսը Բրոքականտային եւ մեր իրաւունքները պաշտպանենք:

Այո՛, գրենք, ոչ երկու, այլ երկու հազար թուղթ. ինչո՞ւ մեր իրաւունքները պիտի յափշտակեն, կ'ըսէ եւ իւր ծիծաղը ծածկելու համար կը սկսի վարի շուրթին տակը բուսած մազերը խառնել:

Ժողովոյ որոշմամբ կը գրուին, կը ստորագրուին եւ կը դրկուին այս թուղթերն, որոնց պատասխանը մինչեւ այսօր եկած չէ:

Պատրիարքական եւ նախագահական իշխանութիւններն այսպէս հագնելէն ետքը, սկսաւ ինք իր գլխուն գործել, ամէն բան ինքը կ'որոշէր եւ կը տնօրինէր, ուրիշներուն ձանձրութիւն չէր տար: Ժողովուրդը նկատելով, որ իր Պատրիարքը առանձին կը գործէ, զինքը յոգնութենէ ազատելու համար ուզեց տասներկու անձերէ բաղկացեալ Ազգային ժողով մը կազմել: Դէն կեցաւ Հասունեան, պնդելով՝ թէ ինքը ազգին անձնանուէր պաշտօնեան է եւ թէ ամէն գործերը վարելու պատրաստ ըլլալով՝ պարապ աշխատութիւն է տասներկու հոգիի ձանձրութիւն տալ: Հակահասունեանք աղերսագիր կու տան Բ. Դոան եւ

Ազգային ժողովոյ հաստատութիւնը կը խնդրեն, Հասունեանք ալ ուրիշ աղերսագրով մը Հակահասունեաններուն ուզածը չեն ուզեր, յայտնելով՝ թէ իրենք շատ գոհ են Հասունեանի բռնած ընթացքէն: Երկու կողմէն մարդեր կը հրաւիրուին Բ. Դուռը, ուր Հասունեանները լալով եւ ողբալով կ'ազդարարեն, թէ դժոխք կ'երթան, եթէ այդ բարեկարգութեան հաւանութիւն տան, մինչեւ որ Համազգեաց ընկերութեան մարմինը մէջտեղէն չվերնայ, առարկելով միանգամայն՝ թէ յիշեալ ընկերութիւնն, որ հայերէն ու հռովմէական հայերէն կազմուած էր ազգի մէջ դաստիարակութիւն ծաւալելու նպատակով, հակառակ էր հռովմէական սուրբ եկեղեցոյ քարոզութիւններուն, թէ երկրագործութիւնը ազգի մէջ ծաղկեցնելն Վատիկանու օրէնքներուն համաձայն չէր, թէ հին դրամներ եւ ձեռագիրներ ժողովելն Աւետարանին հակառակիլ էր, թէ գիւղերու եւ քաղաքներու մէջ դպրոցներ հաստատելն Պետրոս առաքեալին ուղկանին մէջ քարեր ձգել էր, թէ վերջապէս հերետիկոս հայերու հետ միաբանիլն ու հաղորդակցութիւն ունենալն իրենց նախատինք էր Հռովմայ գահուն առջեւ: Հասունեան իւր արածած հօտին լուսաւորութենէն մեծ օգուտներ քաղելով, յաջողեցաւ քանդել Համազգեաց ընկերութեան հիմերն, որոնց վրայ շինուեցաւ հռովմէական սուրբ եկեղեցոյ փառքը: Բայց Հակահասունեան կուսակցութիւնը Ազգային ժողովոյ հաստատութեանը վրայ պնդելով կը պնդէր: Բ. Դուռն ա՛լ ձանձրացաւ Հասունեանէ եւ հրաման դրկեց, որ Հակահասունեաններու աղերսագիրն գործադրուի: Հասունեան այս անգամ չկրցաւ Բ. Դռան հրամանին դիմադրելու եւ ստիպուեցաւ պատրիարքական իշխանութենէ հրաժարիլ, պատճառելով, թէ անձնական տկարութիւն ունէր, մինչդէռ օրը տասներկու անգամ կը ճաշէր եւ երկաթէ մը աւելի քաջառողջ էր:

Մեծ սխալի մէջ իյնալ է կարծելը, թէ Հասունեան պատրիարքութենէ հրաժարելուն պէս գործէ քաշուեցաւ: Վենետիկի միաբանութիւնն, որ Հասունեան քաղաքականութեան թշնամի նկատուած էր, հաճեցաւ իւր երեսին վրայ ապտակ մը ընդունել Հասունեանէ, որ իտալերէն պարսաւագիրք հրատարակելով ամբաստանեց Վենետիկի միաբանութիւնն իբրեւ հերետիկոս եւ հերձուածող, պատճառելով՝ թէ յիշեալ վանքին միաբաններն միշտ պաշտպան են հայերու: Վենետիկի Միաբանութիւնը ինքզինքն արդարացնելու համար պարսաւագիրքին պատասխան մը գրեց պարսաւագիրքով մը, որուն մէջ յայտարարելէ ետեւ, թէ Հռովմայ պապին ամէն հրամաններուն հպատակ էր, կը յարէր նաեւ, թէ հայ

ագգն ու եկեղեցին հերձուածող եւ հերետիկոս էր: Այս պատասխանին վրայ  
Հասունեան ուրախութենէն ամիս մը խնդաց:

1853-ին գործերն այն աստիճանի եկան հասան, որ Հակահասունեաններն  
յայտնեցին վերջապէս, թէ իրենց անհնար է Հասունեաններու հետ միանալը:  
Հասունեան, իր վարպետութեան գէնքերուն վրայ բարդեց նաեւ կրօնական  
գէնքեր: Բանադրեց այն ամէն անձերն, որոնցմէ չէր ախորժեր: Քանի մը օրէն իր  
վարդապետները իրեն հրաւիրելով՝ իշխանութիւն տուաւ անոնց մինչեւ նոր  
կիրակի արձակել անուղղակի գործողները ինքը բանադրելու զբաղած ըլլալով  
արձակելու ժամանակ չունէր, իսկ ինք ստանձնեց ուղղակի գործողներն  
արձակելու պաշտօնը զոր մինչեւ այսօր արժանի չեղաւ վարելու: Առաւօտը  
արթննալուն պէս վարդապետներուն կ'ըսէր, բանադրուելիք անձերու ցուցակը  
բերէ՛ք նայինք, իսկ երբ վարդապետները կը պատասխանէին, թէ բանադրուելու  
մարդ չմնաց՝ կը սպառնար իրենց, որ մարդ գտնեն, որպէսզի բանադրէ: Ճաշէն  
առաջ կը բանադրէր, ճաշէն ետքը քիչ մը կը կախակայէր, թէպէտեւ երբեմն ալ  
կ'արձակէր, բայց շատ անգամ գիշերը կը քակէր եւ առաւօտուն կը կապեր. եթէ  
կապելու համար չուանի պէտք ունենար՝ չուանի վաճառականները մեծ գործ մը  
տեսած պիտի ըլլային: Հասունեան երբ տեսաւ, որ բանադրելն, անիծելն ու  
կախակայելը մեծ արդիւնք մը չունեցան, սկսաւ ս. պապէն շրջաբերականներ  
բերել տալ, ամէն օր արեւուն հետ մէկտեղ նոր շրջաբերական մը կ'ելնէր:  
Հակահասունեաններն այդ շրջաբերականները կարդալով՝ հետեւեալ կերպով կը  
պատասխանէին Հասունեանին.

«Գեր. Հասունեան,

Մեծապէս մխիթարուեցանք կարդալով ս. Հօր Պիոսի Թ. քահանայապետին  
կոնդակը:

Մենք քու վրայ վստահութիւն չունինք:

Ձեր բռնած ճամբան անհամաձայն է Քրիստոսական ոգոյն:

Ուստի ամենեւին անվստահ ըլլալով ձեր վրայ, դարձեալ հաստատութեամբ կը  
նորոգենք մեր բողոքը աշխարհի առջեւ, որ ասկից ետքը մէկ կերպով մը չենք



ճանչնար զձեզ մեզի հովիւ եւ առաջնորդ... զնա՛, մարդ Աստուծոյ, թող տուր քիչ մը մեր օձիքը»:

Հասունեան այս պատասխանը կարդալով՝ աչերը վեր կը վերցունէր եւ կ'աղօթէր. Հա՛յր, թող սոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն. աղօթքը լննցնելուս պէս ինքնիրեն կ'ըսէր. դուք մի՛ ուզէք զիս, ես զձեզ կ'ուզեմ:

1857-ին հոգեւորական իշխանութեան համար տէրութենէն պերաթ ընդունեց, որով իրաւունք ստացաւ իր ձեռնադրած եպիսկոպոսներն ուզած տեղը դրկել, առանց ազգային իշխանութեան հարցնելու: Այս պերաթի խնդիրն ազգը տակնուվրայ ըրաւ: Ամէն անիրաւութիւն կ'ընէր, կ'ըսէին, եւ երբ Բ. Դուռը բացատրութիւն պահանջէր՝ այդ գործը հոգեւորական է, ինձի կը վերաբերի, կը պատասխանէր:

Հասունեան քսան տարի վանականներու եւ ազգին դէմ մաքառելէ ետքը, ուզեց որ Կիլիկիոյ Տան աթոռն Պոլսոյ աթոռին քով դնէ, միացնէ զանոնք եւ երկու աթոռներուն վրայ նարտ մը դնելով իւր ժողովրդեան հետ խաղայ եւ զուարճանայ: Կիլիկիոյ Տան կաթողիկոսն բանակցութեան մտաւ Հասունեանի հետ, որ լոեց, երբ տեսաւ՝ թէ հակառակ սկզբունքներուն վրայ պիտի հիմնուէր այս միութիւնը:

1865 դեկտեմբերի 23-ին հոգին կը փշէ Կիլիկիոյ պատրիարք Գրիգոր կաթողիկոսը. 1865 դեկտեմբերի 28-ին նոր հոգի կ'առնէ Կ. Պոլսոյ նախագահ Անտոն Հասունեան: Վանականներն իրենց սահմանադրութեան համեմատ անմիջապէս գաղտնի քուէարկութեամբ տեղապահ կ'ընտրեն Դաւթեան Սերովբէ վարդապետը: Նախագահ արքեպիսկոպոս Գասպարեան Բարսեղ անպատուութիւն սեպելով իրեն վրայ պարզ վարդապետի մը տեղապահ ընտրուիլը՝ անմիջապէս պէտք եղած տեղերը կը դիմէ եւ Երուսաղէմայ լատին պատրիարք մոնսիներօր Վալերկայի ազդեցութեամբ եւ մէկու մը ձեռամբ Դաւթեան վարդապետը հսկողութեան ներքեւ կը բանտարկուի, սա յանցանքով, թէ ինչո՞ւ միաբանները իրեն շատ քուէ տուած են: Հասունեան ամէն ճիգը թափելով կաթողիկոս կ'ընտրուի, միշտ կրկնելով՝ թէ «Եթէ հանգուցեալ կաթողիկոսին իրաւունքներէն Հռովմ փոքր փոփոխութիւն մը ընել ուզէ, բնաւ յանձն չեմ առներ կաթողիկոսութիւնը. Աստուած մի՛ արասցէ, իմ նախագահութիւնս ինձի բաւական է»: Ասոր վրայ կ'ելնէ, Հռովմ կ'երթայ իւր

կաթողիկոսութիւնը հաստատել կու տայ եւ ետ կը դառնայ ընդհանուր սովորով մը, որ հռովմէական հայերը ամէն իրաւունքներէ կը զրկէր:

Դարձեալ կոհի եւ վէճ: Բ. Դուռը ա՛լ ձանձրանալով Հասունեանի ընթացքէն, ինչպէս որ մենք ալ ձանձրացանք անոր ըրածներն պատմելէն, Մահմուտ Նետիմ փաշային օրով կը վճռուի, որ այս բարի մարդը քիչ մը դուրս ելնէ Օսմանեան հողէն: Հասունեան բանադրելով իր... բախտը, Պոլիսէն կը մեկնի եւ Քիւբելեան պատրիարք կ'ընտրուի կախակայալ եւ բանադրեալ հռովմէական հայերու: Հասունեան պարապ չնստիր. կը համոզէ Քիւբելեանը, որ ազարակի մը դատն վաստակած ըլլալով, Հասունեանի թշնամի ըլլալու պատճառ մը չունէր այլեւս, որ պատրիարքութենէ հրաժարուի: Քիւբելեան գղջումի կու գայ. ս. պապին առջեւ մեղայ կը գոչէ ազգին իրաւունքներն քանի մը տարի պաշտպանելով մեծ մեղք գործելուն համար: 1879-ին Հասունեան պատրիարք կ'ընտրուի:

Հոս կը վերջանայ ահա կենսագրութիւնն այն մարդուն, որուն դէմքն օր մը պզտիկ տղայ մը տեսնելով վախցած է եւ մինչեւ այսօր կու լայ: